ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 հոկտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

133
(2983)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԷԼ ՄՈՒԿ, ԷԼ ՁՈՒԿ. ԱԺ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱԿԱՆՎԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը, պարզվում է, իր մտերիմ շրջապատում մականուն ունի:

«Ժողովուրդ» օրաթերթին լուրեր հասան, որ Էրեբունի վարչական շրջանի՝ իր բնակության վայրի հարակից տարածքներում, մտերիմ շրջապատում Դավիթ Առաքելյանին «ձուկ» մականունով են դիմում: Նրա արդեն նախկին ընկերներից մի քանիսը պատմեցին, որ բոլորը գիտեն, թե Դավիթին ինչպես են դիմում, եւ ինքն էլ վաղուց վատ չի զգում իր մականվան համար:

«Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցմամբ դիմել է Դավիթ Առաքելյանին եւ հետաքրքրվել՝ ինչի հետեւանքով է այդ մականունն առաջացել, ում կողմից, ինչու են իրեն այդպես բնորոշում եւ ինչպես է վերաբերվում մականվանը:

ԱԺ աշխատակազմի ղեկավարը, սակայն, ո՛չ հաստատել, ո՛չ էլ հերքել է տեղեկությունը:

Ի պատասխան մեր հարցման՝ ԱԺ աշխատակազմից գրել են. ««Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իմաստով այն հարցում չի հանդիսանում, քանի որ ուղղված չէ տեղեկություն հանդիսացող որեւէ տվյալի ստացմանը»:

Հիշեցնենք, որ Ազգային ժողովի նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանին էլ «մուկ» մականունով էին դիմում, եւ ինքը՝ Աբրահամյանը, տարիներ առաջ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասել էր, որ իր տատն է իրեն «մուկ» ասել, քանի որ փոքր ժամանակ կոնֆետները թաքուն, «մկան նման կերել է»:

Սակայն Դավիթ Առաքելյանի դեպքում «ձուկ» մականվան մանրամասները պարզել չկարողացանք:



ՔՊ խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանը, ով աչքի է ընկնում ուժային կառույցների ղեկավարների հետ իր մտերմությամբ եւ ԱԺ-ում անթաքույց նրանց ուղեկցում է տարբեր սենյակներ, դրա համար պատճառներ ունի. տարիներ շարունակ նա մի քրեական վարույթով որպես վկա է անցնում: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներց տեղեկացավ, որ 2023 թվականի եկամուտների, անշարժ գույքի, շահերի եւ ծախսերի հայտարարագրում ԱԺ իշխանական պատգամավորը անշարժ գույք չի հայտարարագրել: Արփի Դավոյանը, որպես տրանսպորտային միջոց, հայտարարագրել է 2011 թվականի արտադրության Hyundai մակնիշի ավտոմեքենա, որը գնման եղանակով ձեռք է բերել պատգամավոր դառնալուց հետո՝ 2021 թվականին, եւ մինչ օրս վարում է: Նրա՝ հաշվետու տարվա սկզբում առկա փոխառության գումարը կազմել է 25 մլն 197 հազար դրամ, որը տարվա վերջում զրոյացվել է: Արփի Դավոյանի՝ հաշվետու տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարը կազմել է 28 մլն 360 հազար դրամ, որը կրկին զրոյացվել է տարվա վերջում: Պատգամավորի բանկային հաշիվների մնացորդներից մեկը կազմել է 865 հազար դրամ, որը հաշվետու տարվա վերջում դարձել է 3 մլն 995 հազար դրամ, իսկ մյուսը զրոյական վիճակից դարձել է 1 մլն 458 հազար դրամ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



2020 թվականին՝ «Քովիդի» շրջանում, ենթադրյալ չարաշահումների գործով հակակոռուպցիոն դատարանում սկսվել է վկաների հարցաքննության փուլը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ առաջիկայում դատարան հարցաքննության կհրավիրվի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, ով այս չարաշահումների գործով վկայի կարգավիճակով մեկ անգամ արդեն հարցաքննվել է: Կորոնավիրուսի շրջանում ենթադրյալ չարաշահումների գործով անցնողները առողջապահության նախկին փոխնախարար Գեւորգ Սիմոնյանը եւ այլ անձինք են: Ըստ հակակոռուպցիոն կոմիտեի՝ Սիմոնյանը, պատասխանատու լինելով պետական ֆինանսավորման բաշխման համար, քավոր-սանիկական կապ ունենալով «Մեդլայն» կլինիկայի տնօրենի հետ, բավարար վերահսկողություն չի իրականացրել, ինչի հետեւանքով Բաբկեն Շահումյանը հափշտակել է շուրջ 120 միլիոն դրամ: Ըստ իրավապահների՝ պատասխանատուները բուժվողների վերաբերյալ «Մեդլայն կլինիկի» տրամադրած կեղծ տվյալները չեն համադրել բուժառուների փաստացի առողջական վիճակի հետ ու չեն արձանագրել անհամապատասխանությունները: 2020-2022 թվականներին առողջապահության փոխնախարարի պաշտոնը զբաղեցրած Գեւորգ Սիմոնյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը: Երեւանի փոխքաղաքապետը կալանքի տակ էր շուրջ երկու ամիս, որից հետո ազատ արձակվեց:



«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների ջանքերի «շնորհիվ» արդարադատության նախարարությունում հրաժարականների շարքը շարունակվում է: Երեկ՝ հոկտեմբերի 1-ին, հրաժարական տվեց ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը: Սեպտեմբերի 26-ին հրաժարական էր տվել երկրոդ նախագահի «գիրքը գրկած» ՀՀ արդարադատության փոխնախարար Սիրվարդ Գեւորգյանը: Դատելով իրավիճակից՝ հաջորդ պաշտոնյան, որը կրկին ՔՊ-ի ջանքերով հրաժարական կտա, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ Ամբակում Գրիգորյանն է լինելու: Բանն այն է, որ մարտի 26-ին Ազգային ժողովում ՔՊ պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը, արդեն հրաժարական տված նախարար Գրիգոր Մինասյանին ասել էր. «Երբ մեր գործընկեր Սերգեյ Ատոմյանը նշանակվում էր ՔԿԾ տնօրեն, մենք մտածում էինք, որ սկսում ենք բարեփոխումների մի լայնածավալ գործընթաց, բայց երբ Ամբակում Գրիգորյանը նշանակվեց խորհրդական, ինձ մոտ մեծ զարմանք առաջացավ այն առումով, որ ես, լինելով փաստահավաք խմբի անդամ, շատ լավ գիտեի, թե քննչական խումբը ինչ գործունեություն է ծավալել «Մարտի 1»-ի գործերով, եւ տվյալ քննիչը, որը Վահագն Հարությունյանի ամենակարեւոր քննիչներից մեկն է եղել, խորհրդականից դարձավ տեղակալ, հետո արդեն ծառայության ղեկավար, ընդ որում՝ քննչական խմբի ղեկավար Վահագն Հարությունյանը մինչեւ հիմա շարունակում է «փախած» մնալ՝ ՀՀ-ից դուրս է: Հիմա դրանով մենք «Մարտի 1-ի» էջը փակո՞ւմ ենք, թե՞ բաց է. եթե բաց է, այդ դեպքում բոլոր քննիչները, որոնք այս գործերով մասնակցություն են ունեցել, պետք է մանրամասն ուսումնասիրվեն նշանակումներից առաջ»: Ու չի բացառվում, որ Անդրանիկ Քոչարյանի «թեթեւ ձեռքով» հաջորդը հրաժարական տա Ամբակում Գրիգորյանը, քանի որ, ինչպես տեղեկացրել էինք, Անդրանիկ Քոչարյանն է հանձնարարել Արփի Դավոյանին նախաձեռնել Գրիգոր Մինասյանի հրաժարականի ստորագրահավաքը խմբակցության ներսում, որն էլ իր ընկերուհի Լուսինե Բաղալյանի հետ սկսել էր այն: Արդյունքում, Գրիգոր Մինասյանը, չսպասելով պրոցեսների զարգացմանը, երեկ ինքնակամ դիմում գրեց ու հեռացավ:

ԶՐՈՒՅՑ

«ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՉԳՏԱՎ»

ԱԺԲ-ն օրեր առաջ հայտարարություն էր տարածել, որ դադարեցնում է համագործակցությունը Սրբազան շարժման հետ և այլևս չի մասնակցելու հավաքներին:

Ըստ ԱԺԲ անդամների՝ պատճառն այն է եղել, որ իրենց առաջարկները եւ խորհուրդները չեն ընդունվել:

ArmLur.am-ի հետ զրույցում ԱԺԲ խորհրդի անդամ Արա Պապյանը նշեց, որ մի քանի անգամ փորձել են հանդիպել շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի հետ, սակայն վերջինս այդպես էլ չի հանդիպել իրենց հետ՝ նշելով, որ զբաղված է:

-Պարոն Պապյան, օրեր առաջ շարժումը հայտարարություն էր տարածել, որ դադարեցնում է համագործակցությունը Սրբազան շարժման հետ, եւ, ինչպես հայտարարության մեջ նշել էիք, պատճառն այն է, որ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը չի օգտագործել առկա հնարավորությունները, չի ընդունել ձեր առաջարկները եւ խորհուրդները: Ինչո՞ւ այդպես ստացվեց, չէ՞ որ շարժման սկզբից ԱԺԲ անդամները ակտիվ մասնակցում էին դրան, ի՞նչն էր կտրուկ որոշման պատճառը:

-Որոշումը կտրուկ չէր, այն հասունանում էր ամիսների ընթացքում: Հայտարարության մեջ մենք նշել էինք, որ եղան դրսեւորումներ շարժման մեջ, որոնք մեզ համար անընդունելի էին: Երբ շարժումը սկզբնավորվեց Տավուշի գյուղերի հանձնման դեմ, բնականաբար, դա համապատասխանում էր մեր սկզբունքներին, եւ աջակցեցինք, նույնը, երբ հստակորեն դրված էր Նիկոլ Փաշինյանի հրաժարականի հարցը, բայց շարժումն աստիճանաբար սկսեց աշխարհաքաղաքական դրսեւորումներ ունենալ, սկսեցին ներգրավվել անձինք, որոնք մեզ համար անընդունելի էին:

-Ովքե՞ր են նրանք, պարոն Պապյան, կարո՞ղ եք անուններ հնչեցնել:

-Օրինակ, երբ Բագրատ սրբազանը հանդիպեց նախկին երկու նախագահների հետ, եւ երրորդի հետ էլ ուզում էր հանդիպել, բայց չհանդիպեց: Մենք միանշանակ հայտարարել ենք, որ նրանք՝ բոլոր նախկին նախագահները, մեղավոր են այս վիճակի համար եւ քրեական պատասխանատվության պիտի ենթարկվեն՝ բացի քաղաքական գնահատականից: Երբ Սրբազան շարժմանը միացան կոնկրետ անձինք, մեզ համար երեւույթը ցանկալի չէր, բայց հանդուրժելի էր, սակայն երբ նման քայլեր արվեցին, բնականաբար, դրանք արդեն քանդեցին համախմբման հիմնական խարիսխը:

Նույնը եւ, երբ շարժումը սկսեց միանշանակորեն հանդես գալ, ինչ-որ սեմինարների մեջ ներգրավվել, պրոռուսական ճառախոսություն սկսեց ի հայտ գալ, եւ դա այն պարագայում, երբ ԱԺԲ-ին, օրինակ, հնարավորություն չէր տրվում պաշտոնապես դիրքորոշում արտահայտել: Բնականաբար, մեր դիրքորոշումը հետեւյալն էր՝ չպետք է խառնել հարցեր, որոնց շուրջ չկա կոնսենսուս, պիտի շարժումը մնա հստակ, միագիծ՝ իր պահանջների մեջ: Երբ այն սկսում է աշխարհաքաղաքական ընդգրկումներ ունենալ, կամ Արցախի հարցի վերաբերյալ դրսեւորումներ, մեզ համար դրանք դարձյալ ընդունելի չեն:

-Ինչո՞ւ Արցախի հարցի վերաբերյալ դիրքորոշումներին համաձայն չեք:

-Մեզ համար Արցախի անկախությունը ընդունելի չէ, որովհետեւ համարում ենք, որ Արցախի անկախության գաղափարը ներդրված է «դրսից» ու կբերի կործանման. Հայաստանից բազմամիլիարդ գումարներ են փորձելու կորզել, որը մենք չենք կարողանալու վճարել, եւ որը հրահրելու է պատերազմ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԼՂ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարությանը նոր շինծու մեղադրանք է առաջադրել, որն ավելի շատ զավեշտի է նման:

Ադրբեջանի գլխավոր դատախազ Քյամրան Ալիեւի խոսքով՝ի թիվս նախորդ մեղադրանքների, նրանք մեղադրվում են նաեւ «պատմամշակութային հուշարձանների ոչնչացման» համար:

Դատախազը հավելել է, որ ձերբակալվածների բոլոր իրավունքները իբրեւ թե «պաշտպանված» են, նրանցից յուրաքանչյուրն ունի մի քանի փաստաբան եւ իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին:

Ադրբեջանի գլխավոր դատախազությունը քրեական գործեր է հարուցել ԼՂ նախկին ռազմաքաղաքական ղեկավարներից 15-ի նկատմամբ:

2023 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի իրականացրած զանգվածային ռազմական ագրեսիայի հետեւանքով ԼՂ ռազմաքաղաքական ղեկավարության մի մասն ապօրինաբար կալանավորվել է, տարվել Բաքու:

Նրանց մեղադրանք է առաջադրվել ահաբեկչության, ահաբեկչության ֆինանսավորման, օրենքով չնախատեսված զինված կազմավորումներ ու խմբավորումներ ստեղծելու, ահաբեկչության նպատակով վարժանքներ անցկացնելու համար:

Այժմ Բաքվում գերեվարված ու կալանքի տակ են պահվում ԼՂ նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը եւ Արայիկ Հարությունյանը, նախկին ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանը, նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը եւ ԶՈՒ շտաբի նախկին պետ Դավիթ Մանուկյանը:

ՀԲԱՊԱՐԱԿՈՒՄ ՀԱՐՑԵՐ ԼՈՒԾԵԼՈՒ ԽՈՍՏՈՒՄԸ ԴՐԺԵՑ

2018 թվականի օգոստոսի 17-ին՝ Հանրապետության հրապարակում կայացած հանրահավաքի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Կառավարությունն ինչպես ձեւավորվել է այս հրապարակում՝ կառավարությունը սրանից հետո հաշվետու է այս հրապարակին, եւ սրանից հետո կառավարությունը ենթարկվում է այս հրապարակին: Մեր կյանքում առաջիկայում համատեղ ջանքերով մենք պիտի ուժեղացնենք հանրաքվեի ինստիտուտը, եւ բազմաթիվ որոշումներ ժողովուրդը պետք է կայացնի հանրաքվեներով: Խոսքը վերաբերում է ինչպես տեղական, այնպես էլ համապետական հանրաքվեներին, եւ ուրեմնմ առաջիկայում պետք է կատարվեն այնպիսի փոփոխություններ, որ քաղաքային, մարզային, պետական, անգամ միջազգային կարեւորագույն իրադարձությունների վերաբերյալ կառավարությունը եւ ժողովուրդը միասին որոշում կայացնեն հանրաքվեներով»:

Այս խոստումը ծայրից ծայր դրժել է Նիկոլ Փաշինյանը: Արցախի հարցը նա լուծեց միանձնյա՝ անգամ ՀՀ նախագահն ու ԱԺ իր խմբակցությունը տեղյակ չէին, Սյունիքից. կոնկրետ սահմանային հատվածներ Վաղարշակ Հարությունյանի ստորագրությամբ հանձնվեցին Ադրբեջանին, Տավուշի Կիրանց բնակավայրը կիսվեց միանձնյա՝ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, սրանք միայն ՀՀ տարածքային ամբողջականության մասն էին, իսկ ներքին հարցերում միանձնյա գրոհները շարունակվում են: Այս տարվա մայիսի 9-ին ճիշտ այնքան մարդ էր հավաքվել Հանրապետության հրապարակում, որքան իր ելույթի օրը, եւ հավաքվածները Փաշինյանի հրաժարականն էին պահանջում, սակայն նա հրաժարական չտվեց: Այսինքն՝ Նիկոլ Փաշինյանը տոտալ կերպով խաբել է:

Շարունակությանը կարող եք հետեւել ArmLur.am լրատվականում:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԱԺ ՔԱՌՕՐՅԱՆ

Ազգային ժողովում երեկ՝ հոկտեմբերի 1-ին, մեկնարկել է խորհրդարանական հերթական քառօրյան: Օրակարգում ընդհանուր առմամբ 17 հարց է: Դրանցից 7-ը կքննարկվեն երկրորդ եւ վերջնական ընթերցմամբ, մնացածը՝ առաջին ընթերցմամբ: Ի թիվս այլ հարցերի՝ օրակարգում է նաեւ ընդդիմադիր պատգամավորների՝ ԱԺ քննիչ հանձնաժողով ձեւավորելու հարցը: Հանձնաժողովի նպատակն է ուսումնասիրել «բռնի տեղահանված եւ Հայաստան տեղափոխված Արցախի Հանրապետության ժողովրդի կենսագործունեության կազմակերպման պայմանները»:

Ընդդիմությունն առաջարկել է, որ ժամանակավոր հանձնաժողովը ղեկավարի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը: Ազգային ժողովի Կանոնակարգ օրենքի համաձայն՝ քննիչ հանձնաժողովի ստեղծումից հետո, այն պետք է նաեւ ԱԺ լիագումար նիստում քննարկվի եւ հաստատվի հանձնաժողովի անդամների թիվը: Եթե իշխող մեծամասնությունը, որն այս դեպքում ՔՊ-ն է, չհաստատի այն, հանձնաժողովը չի կարող գործել եւ որոշումներ կայացնել:

ՀՀ–Ն ԱԳՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ

Մեկնարկել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը Լեհաստան, որտեղ ՀՀ-ն առաջին անգամ ԱԳ նախարարի մակարդակով մասնակցում է Վարշավայի անվտանգության ֆորումին: Այդ մասին հայտնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Ֆորումի նախագահ Կատաժինա Պիսարսկայայի կողմից պաշտոնական դիմավորումից հետո նախարար Միրզոյանը հանդիպում է ունեցել ֆորումի հիմնադիր, «Կազիմիր Պուլասկի» հիմնադրամի նախագահ Զբիգնեւ Պիսարսկիի հետ:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի, այդ թվում՝ Վարշավայի անվտանգության եւ սեպտեմբերին Երեւանում անցկացված «Երեւանյան երկխոսություն» միջազգային ֆորումների միջեւ հնարավոր համագործակցության շուրջ:

Անդրադարձ է կատարվել ԵՄ հետ ՀՀ գործընկերության խորացմանն ուղղված ջանքերին եւ այդ ուղղությամբ, մասնավորապես, Լեհաստանի գործընկերների հետ համագործակցության հարցերի:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՐ ՏԵՂԸ ԶԻՋՈՒՄ Է ՄԱՐԿ ՌՅՈՒՏԵԻՆ

Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը 10 տարի պաշտոնավարելուց հետո կլքի Բրյուսելում գտնվող ՆԱՏՕ-ի կենտրոնակայանը՝ իր տեղը զիջելով Նիդերլանդների նախկին վարչապետ Մարկ Ռյուտեին:

Հանձնման պաշտոնական արարողությունից հետո նրանք ելույթ կունենան կազմակերպության աշխատակիցների առջեւ: Այնուհետեւ Ռյուտեն իր առաջին ասուլիսը կանցկացնի ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում: Հոլանդացի քաղաքական գործիչը կդառնա դաշինքի 14-րդ ղեկավարը: Նրա մանդատը հինգ տարի է եւ կարող է երկարաձգվել:

Ըստ լրատվամիջոցների՝ սպասվում է, որ Ռյուտեն կպահպանի Ստոլտենբերգի առաջնահերթությունները դաշինքում: Խոսքը վերաբերում է Ուկրաինային աջակցությանը, ՆԱՏՕ-ի երկրների պաշտպանական ծախսերը մեծացնելուն եւ ԱՄՆ-ին եվրոպական անվտանգության մեջ ներգրավելու խնդրին:

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ՝ ԳԱԶԱՅՈՒՄ

Գազայի հատվածի բոլոր շենքերի մոտ 66 տոկոսն ավերվել կամ վնասվել են անցյալ տարվա հոկտեմբերի 7-ից ընթացող հակամարտության ընթացքում: Ինչպես փոխանցում է «ՌԻԱ Նովոստին», այս մասին ասվում է ՄԱԿ-ի արբանյակային կենտրոնի (UNOSAT) զեկույցում:

Կենտրոնի վերլուծությունը, որը հիմնված է 2024 թվականի սեպտեմբերի 3-ին եւ 6-ին հավաքված արբանյակային պատկերների վրա, ցույց է տալիս, որ երկու երրորդը. Գազայի հատվածի բոլոր կառույցները վնասվել են», - ասվում է փաստաթղթում: Կազմակերպության տվյալներով՝ Գազայի հատվածում շենք-շինությունների երկու երրորդին վնասներ են հասցվել:

Ըստ այդմ՝ ընդհանուր առմամբ վնասված շինությունների թիվը կազմում է 163,778, այդ թվում՝ 52 հազար 564-ը ավերվել է, 18,913-ը՝ լուրջ վնասվել, իսկ մյուսները կամ ավելի փոքր ավերածության են ենթարկվել, կամ ենթադրվում է, որ վնասվել են:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ՝ «ՀԲՋԲՈԼԼԱՀ»-Ի ԴԵՄ

Իսրայելի պաշտպանության նախարար Յոավ Գալանտը հայտարարել է լիբանանյան «Հըզբոլլահ» շիական շարժման դեմ ռազմական գործողության «հաջորդ փուլի» մոտալուտ մեկնարկի մասին:

Ինչպես փոխանցում է ՏԱՍՍ-ը՝այս մասին Յոավ Գալանտը գրառում է կատարել X-ի իր միկրոբլոգում:

Գրառման մեջ նա նշել է, որ հանդիպում է ունեցել հակամարտության գծում գտնվող բնակավայրերի ղեկավարների հետ եւ ընդգծել, որ այդ գործողությունը պետք է էական դեր խաղա Իսրայելի հյուսիսում սահմանամերձ բնակավայրերի բնակիչների վերադարձի համար, որոնք տարհանվել են լիբանանյան տարածքից «Հըզբոլլահի» ստորաբաժանումների մշտական գնդակոծությունների պատճառով:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿԸՆԴՈՒՆԻ՞ ԴԻՄՈՒՄԸ

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏՎԵՑ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության շուրջ ՔՊ-ում տեղի ունեցող խմորումները, կարծես թե, հասան նոպատակին:

Երեկ՝ առավոտյան ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը հրաժարականի դիմում ներկայացրեց:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՔՊ խմբակցության պատգամավորները ստորագրահավաք են իրականացնում Գրիգոր Մինասյանին հեռացնելու համար, սակայն 71 պատգամավորներից 27-ն է միայն միացել նախաձեռնությանը:

Ավելի վաղ հայտնել էինք նաեւ, որ Գրիգոր Մինասյանի դեմ այս արշավի կազմակերպիչն է ՔՊ-ական Արփի Դավոյանը՝ Անդրանիկ Քոչարյանի հանձնարարությամբ:

Մինասյանի դեմ դավեր նյութողների թվում է նաեւ Լուսինե Բադալյանը՝Լուլուն: Արփի Դավոյան-Լուսինե Բադալյան-Անդրանիկ Քոչարյան եռյակը կուսակցության դռնփակ նիստերից մեկի ժամանակ հրապարակավ բողոքել է, որ դժգոհ է նախարար Գրիգոր Մինասյանի աշխատանքից, քանի որ նա Միքայել Մինասյանի եղբայրն է, եւ հայտարարել են, որ այդ պատճառով էլ նրա պաշտոնանկության հարցով ստորագրահավաք են սկսելու: Սակայն եռյակի այս նախաձեռնությունն այնքան էլ միանշանակ չի ընդունվել ՔՊ-ում, անգամ Նիկոլ Փաշինյանն է ասել, որ ինքը գոհ է Գրիգոր Մինասյանի աշխատանքից ու պատգամավորներից պահանջել է՝հիմնավոր պատճառներ ներկայացնեն, թե ինչու նախարարը պետք է պաշտոնանկ արվի:

Ճնշումների արդյունքում Մինասյանը ազատման դիմում ներկայացրեց՝ ինչպես օրեր առաջ նման ճնշումների արդյունքում նորանշանակ փոխնախարար Սիվիկ/Սիրվարդ Գեւորգյանը:

Նախարարի՝աշխատանքից ազատման դիմումը կա, սակայն վարչապետը այն կստորագրի, թե ոչ հարցական է:

Այնուամենայնիվ, փաստն այն է, Նիկոլ Փաշինյանը գոհ է Մինասյանի աշխատանքից:

Ավելի վաղ՝ երեկ առավոտյան, Գրիգոր Մինասյանն իր ֆեյսբուքյան էջում գրել էր. «Այսօր որոշեցի ես էլ միանամ իմ պաշտոնավարման դեմ ստորագրահավաքին: Վարչապետին ներկայացրեցի իմ հրաժարականի դիմումը:

Խորհրդարանական կառավարման համակարգում դժվար կլինի նախարարի պաշտոն զբաղեցնելը, եթե նույնիսկ մեկ պատգամավորի հետ դրական համագործակցություն չունենաս: Ես տեղեկացա, որ խնդիր ունեմ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության շուրջ երկու տասնյակ պատգամավորների հետ:

Մեծապես շնորհակալ եմ եւ միշտ ջերմությամբ կհիշեմ ինձ բարությամբ ընդունած եւ աջակցած բոլոր մյուս պատգամավորներին, ընկեր դարձած կառավարության բոլոր գործընկերներին եւ, իհարկե, ինձ մեծագույն հնարավորություն տված վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Արդարադատության ոլորտի բարեփոխման համար նրանց հետ եւ նրանց օգնությամբ շատ բան ենք արել նաեւ այս վերջին երկու տարիներին: Կառավարության ծրագիրը մեր մասով հաստատ գերակատարված է միջոցառումների քանակի եւ որակի առումով: Կառուցված ճանապարհն ու դպրոցը մարդիկ միանգամից են տեսնում եւ վայելում, բայց նոր արբիտրաժային համակարգի, հարկադիր կատարման վերափոխված ծառայության, թվայնացված քաղաքացիական դատավարության, կայացած պրոբացիայի ծառայության եւ բազմաթիվ այլ բարեփոխումների կամ հարյուրավոր օրենսդրական ու ռազմավարական փոփոխությունների արդյունքները բոլորս կվայելենք որոշ ժամանակ անց:

Մարդիկ արդարադատության նախարարներից միշտ սպասել են արդարության արագ եւ անմիջական վերականգնում: Դա նախարարի գործառույթ չէ: Դա վերապահված է իրավապահներին ու դատարաններին:

Մենք քաղաքականություն մշակողն ենք եւ ինստիտուցիոնալ համակարգը բարելավողը: Երկու ուղղությամբ էլ շատ բան է արվել արդեն: Պտուղները կլինեն շուտով, բայց արդեն հաջորդ նախարարների օրոք:

Իհարկե, կարելի էր ավելի համբերատար լինել, մնալ եւ պայքարել այս ամենի համար եւ շարունակել հանգիստ ներկայացնել կատարված հսկայածավալ աշխատանքը, բայց ես որոշեցի վերադառնալ ինձ ավելի հարազատ միջավայր: Արդարադատության ոլորտին կարելի է նպաստել նաեւ մասնավոր հատվածում»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբն արձագանքել է Քամալա Հարրիսի՝ Հայաստանի Անկախության օրվա առիթով արված հայտարարությանը:

Հաղորդագրության մեջ ընդգծվում է, որ հանձնախումբը ավելի վաղ բացասաբար է գնահատել ինչպես Բայդենի գործող, այնպես էլ Թրամփի նախկին վարչակազմերի գործունեությունը հայկական հարցերի վերաբերյալ, հատկապես Լեռնային Ղարաբաղի շուրջ զարգացումներում:

ՀՀ անկախության օրվա առթիվ ԱՄՆ նախագահի դեմոկրատ թեկնածու, երկրի գործող փոխնախագահ Քամալա Հարրիսը հրապարակել է ուղերձ՝ ուղղված ամերիկահայությանը: Դրանում Հարրիսը աջակցություն է հայտնել «Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայերի՝ իրենց տներն անվտանգ վերադառնալու իրավունքին»: Դեմոկրատ թեկնածուն նաեւ նկատել է. «Մենք երբեք չպետք է մոռանանք Հայոց ցեղասպանությունը», ինչպես նաեւ հանձնառու է «Հայաստանի եւ իր հարեւանների միջեւ ինքնիշխանությունը, անկախությունը եւ տարածքային ամբողջականությունը հարգող կայուն խաղաղությանը հասնելուն»:

Անդրադառնալով փոխնախագահ Հարրիսի հայտարարությանը՝ Վաշինգտոնի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նշել է. «Որպես փոխնախագահ՝ Քամալա Հարրիսը մի ամբողջ տարի ուներ գործելու Արցախի վերադարձի իրավունքի համար՝ ԱՄՆ առաջնորդությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւի միջոցով, սակայն նա այս մասին սկսել է խոսել (ամերիկահայերի, ոչ թե ՄԱԿ-ի անդամ երկրների հետ) ընտրություններից միայն 40 օր առաջ, երբ հայ ընտրողները կարող են վճռորոշ լինել առանցքային տատանվող նահանգներում: Հատկանշական է, որ փոխնախագահ Հարրիսը, որի վարչակազմը զինել է Ադրբեջանի ցեղասպանական շրջափակումը եւ հարձակումը Արցախի վրա, մատ անգամ չբարձրացրեց եւ նույնիսկ ձայն չբարձրացրեց 2023 թ. Ադրբեջանի ագրեսիայի դեմ»:

«ԴԱՐՁԵ՛Ք ՊԱՅՔԱՐԻ ՋԻՆՎՈՐ...». ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆ

«Մտնում ենք մեր պայքարի, հաղթանակի, հույսի փուլ՝ հետեւողական, աննահանջ, համառ, համբերատար պայքարի փուլ, որը երաշխավորված է հաղթանակով»: Այս մասին իր ուղերձում հայտարարել է Սրբազան պայքար շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը՝ բոլորին հրավիրելով հոկտեմբերի 2-ին՝ ժամը 18:30-ին, Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին:

Նա, մասնավորապես, նշել է. «Մեր պետության համար օրհասական այս օրերին մենք պարզապես սխալվելու իրավունք չունենք: Սա նյարդերի պայքար է: Ամուր նյարդերով, աննահանջ կամքով, ճշմարտության եւ արդարության հետամուտ մարդկանց պայքար է, ովքեր լի են ուրախությամբ եւ պատվով: Ով հավատում է այս պայքարի ճշմարտությանը՝ թող դառնա նրա զինվորն ու կատարի պահանջվածը:

Հուսահատության, խեղճության եւ կասկածամտության, անզորության զգացումի ժամանակ չունենք: Վերլուծությունների, մեկնաբանությունների, քննարկումների ժամանակը վաղուց սպառված է:

Եկել է բռունցքվելու եւ գործելու ժամանակը: Ես ինձ ամբողջությամբ նվիրել եմ այս պայքարին՝Տիրոջ կոչին անսալով:

Սպասելու եմ բոլորիդ Հանրապետության հրապարակում՝ հայոց գալիք հաղթանակի տեսիլքով: Գնալո՛ւ ես, Նե՛ռ... Հայկի ժառանգները գալիս են...»:

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԻՆՉ Է ԱՍԵԼ Գ. ՄԻՆԱՍՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ

Ինչպես ավելի վաղ հայտնել էինք՝ ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության շուրջ ՔՊ-ում նոր խմորումներ էին տեղի ունենում:

ՔՊ խմբակցության պատգամավորները սկսել էին ստորագրահավաք իրականացնել՝ Գրիգոր Մինասյանին հեռացնելու համար, սակայն 71 պատգամավորներից 27-ն էր միայն միացել նախաձեռնությանը: Ավելի վաղ հայտնել էինք նաեւ, որ Գրիգոր Մինասյանի դեմ այս արշավի կազմակերպիչն է ՔՊ-ական Արփի Դավոյանը՝ Անդրանիկ Քոչարյանի հանձնարարությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ էին հասել, որ Մինասյանի դեմ դավեր նյութողների թվում էր նաեւ Լուսինե Բաղալյանը՝ Լուլուն: Արփի Դավոյան-Լուսինե Բաղալյան-Անդրանիկ Քոչարյան եռյակը կուսակցության դռնփակ նիստերից մեկի ժամանակ հրապարակավ բողոքել էր, որ դժգոհ է նախարար Գրիգոր Մինասյանի աշխատանքից, քանի որ նա Միքայել Մինասյանի եղբայրն է, եւ հայտարարել էին, որ այդ պատճառով էլ նրա պաշտոնանկության հարցով ստորագրահավաք են սկսելու: Բայց, արի ու տես, որ ուրբաթը շաբաթից շուտ եկավ ու երեկ առավոտյան Գրիգոր Մինասյանն ինքնակամ որոշեց հրաժարակի դիմում ներկայացնել ՀՀ վարչապետին:

«Այսօր որոշեցի ես էլ միանամ իմ պաշտոնավարման դեմ ստորագրահավաքին: Վարչապետին ներկայացրեցի իմ հրաժարականի դիմումը:

Խորհրդարանական կառավարման համակարգում դժվար կլինի նախարարի պաշտոն զբաղեցնելը, եթե նույնիսկ մեկ պատգամավորի հետ դրական համագործակցություն չունենաս: Ես տեղեկացա, որ խնդիր ունեմ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության շուրջ երկու տասնյակ պատգամավորների հետ»,- իր ֆեյսբուքյան էջում հայտարարել էր Մինասյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ հաջորդ պաշտոնանկությունը սպասվում է ԲԴԽ-ում: Խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը հրաժարական կներկայացնի, քանի որ նրա դեմ եւս իշխանության ներսում դավեր են նյութում: Մենք դիմեցինք մամուլի պատասխանատուին, որտեղից արձագանքեցին, որ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնավարումը որեւէ առնչություն չունի կառավարության որեւէ անդամի պաշտանավորման կամ քաղաքական գործընթացների հետ:

«Կարեն Անդրեասյանը որեւէ մտադրություն չունի հրաժարական ներկայացնելու:

Նա վստահաբար կշարունակի աշխատել մինչեւ իր պաշտոնավարման սահմանադրական ժամկետի ավարտը՝ 2027 թվականի հոկտեմբերի 6-ը»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԿԵՍՈՒՐՆ ՈՒ ԱՊՕՐԻՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՆ ԸՆԿԵԼ Է ԴԱՏԱՐԱՆԻ ԴՌՆԵՐԸ

Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանը դատի է տվել Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին եւ պահանջում է, որ որոշումն անվավեր ճանաչեն:

Իսկ ինչու է նա ընկել դատարանի դռները:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանին ենթարկել է վարչական պատասխանատվության 300 հազ. դրամի չափով՝ շահերի բախմանն առնչվող գործողություններ կատարելու համար:

Վարչական պատասխանատվության հիմք է հանդիսացել «Հետքի»՝ «Դիանա Գասպարյանի սկեսուրն Էջմիածնում ապօրինի շինարարություն է սկսել» վերնագրով հոդվածը:

Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի ամուսնու ընտանիքն Էջմիածնում առանձնատների կառուցման բիզնես էր սկսել: Այդ նպատակով գործընկերների օգնությամբ ձեռք է բերվել համայնքային հողատարածք եւ, չսպասելով թույլտվություններին, հողային եւ բետոնացման աշխատանքներ են կատարվել:

Փոքր առանձնատները կառուցվում են քաղաքի Տերյան փողոցի մարզադպրոցի հարեւանությամբ: Այնտեղ շինարարությունը եռում է: Մի հատվածում բետոնացման աշխատանքներ են կատարվում, մյուս հատվածում՝ հողային: «Նարե Պլյուս» ՍՊԸ-ին տրվել է շինարարության 20 թույլտվություն բնակելի տներ կառուցելու համար: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 1,2 հեկտար, որը բաժանված է 59 առանձին հողամասերի:

«Նարե Պլյուս» ընկերության միակ սեփականատերը համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի սկեսուրն է՝ ավագանու անդամ Արամայիս Միրզոյանի մայրը: Ընկերությունը ստեղծվել է 2023 թ. հուլիսի 17-ին: Ռուզաննա Ասատրյանը «Նարե Պլյուս» ՍՊԸ-ի միակ սեփականատերն ու տնօրենն է:

Դիանա Գասպարյանը 2023 թ. նոյեմբերի 24-ին, նոյեմբերի 28-ին եւ դեկտեմբերի 13-ին «Նարե պլյուս» ՍՊԸ-ի տնօրենին, որն իր սկեսուրն է, տվել է շինարարության 20 թույլտվություն:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիտարկմամբ՝ համայնքի ղեկավարը 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել հանձնաժողով՝ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին: Այդպիսով չի կատարել օրենքի պահանջը:

Դիանա Գասպարյանը կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին դիրքորոշում է ներկայացրել, որ Ռուզաննա Ասատրյանն իր ամուսնու մայրն է: Վերջինիս հետ համատեղ չի բնակվում, վարում է առանձին տնտեսություն եւ իր հետ փոխկապակցված անձ չի հանդիսացել, ուստի չէր կարող առաջանալ ենթադրվող շահերի բախումը: Բացի այդ, հայտնել է, որ որոշումները կայացնելիս չի առաջնորդվել անձնական կամ մասնավոր շահով եւ որեւէ նպատակ չի ունեցել առավելություն կամ արտոնություն ձեւավորելու իր կամ իր ընտանիքի անդամի նկատմամբ:

Դիանա Գասպարյանը նաեւ մի շարք պատճառաբանություններ է ներկայացրել, որ իր գործողությունները կատարել է բարեվարքության սկզբունքից ելնելով եւ հանուն հանրային շահի:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հիմնավոր չի համարել Դիանա Գասպարյանի դիրքորոշումը եւ նրան ենթարկել է վարչական պատասխանատվության՝ արձանագրելով շահերի բախմանն առնչվող իրավահարաբերությունը, որով խախտվել է օրենքը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

«ԽՆՁՈՐ ՆԵՏԵԼՈՒ» ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղղությամբ խնձոր նետելու դեպքով քննչական կոմիտեն որոշում է կայացրել:

Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել ու գործը ուղարկվել է դատարան:

Հիշեցնենք, որ օգոստոսի 23-ի երեկոյան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռուբինյանց 2/2 հասցե էր գնացել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ իր հորաքրոջն ու դստերը տեսակցության: Հանդիպումն ավարտելուց հետո, երբ շենքից դուրս էր եկել, դիմացի շենքի 9-րդ հարկից խնձոր էին նետել Փաշինյանի ուղղությամբ: Նիկոլ Փաշինյանն ու վերջինիս պահակախումբը ենթադրել են, որ իրենց ուղղությամբ նռնակ է նետվել, եւ անմիջապես պառկել են գետնին:

Արդյունքում, գործի են անցնում իրավապահները Ռուբինյանց 2/2 շենքում, եւ սկսվում է խուզարկություն: Խուզարկության արդյունքում, խնձորը նետելու կասկածանքով, ձերբակալվում է 71-ամյա արցախցի Ալբերտ Առստամյանը: Դեպքից հետո փաստաբան Ռոման Երիցյանը հայտարարում է, որ Ալբերտ Առստամյանի ընտանիքի անդամներին (2 աղջկան եւ թոռնուհուն) նույն օրը, վերջիններիս կամքին հակառակ, տեղափոխել են ոստիկանության Զեյթունի բաժին եւ պահել են տեղում մինչեւ առավոտյան 07:00-ն: Վերջինիս բնակության վայրը, մանկահասակ երեխաների ներկայությամբ, ենթարկել են խուզարկության՝ խնձոր գտնելու նպատակով:

Փաշինյանի ուղղությամբ խնձոր նետելու պատճառով Ալբերտ Առստամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար:

Նրա նկատմամբ ընտրվել է բացակայելու արգելք խափանման միջոցը:

ԵՐԵՔ ՕՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է 37 ՃՏՊ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ սեպտեմբերի 27-30-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 194 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է ֆիզիկական ներգործության 1 դեպք:

Հայտնաբերվել է 6 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 4-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 3 դեպք:

Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 37 պատահար. 2 մարդ զոհվել է, 52-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտ. 30-ից հոկտ.1-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 100 դեպք՝ որից 1-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

«ԴԵՆԴՐՈՊԱՐԿԻ» ՎՆԱՍԻ ՉԱՓԵՐԸ ՉԵՆ ՃՇՏՎԵԼ

2020թ.-ից Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից ապօրինի կերպով Աղստեւի հունը փոխելու, գետի հունում երկար, բետոնե պատ կառուցելու հետեւանքով «Դենդրոպարկը» մնացել է առանց ոռոգման ջրի, ծառայգում չորացել են շուրջ 25 000 տնկիներ, 1500-ից ավելի հազվագյուտ ծառեր ու թփեր, որոնցից մոտ 250 տեսակը «Դենդրոպարկում» արդեն վերացել է: 2023թ. փետրվարի 2-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն (այժմ նախկին) Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր, 5,7 հա տարածքը, որը «Դենդրոպարկի» մաս է, հատկացվել է գինու, կոնյակի գործարանին՝հանգստի գոտու վերածելու նպատակով: Իջեւանի գինու, կոնյակի գործարանն առանց շինթույլտվության հենապատ կառուցելու համար 2021թ. մարտի 29-ին տուգանվել է 200 հազար դրամի չափով: Սակայն գործարանը դրանից հետո շարունակել է կառուցապատումը եւ 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով: 2021թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է նախաձեռնվել, սակայն որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ: Պատճառված վնասի չափերը պարզելու համար նշանակվել է փորձաքննություն, որը, սակայն, անցած 3 տարում չի անցկացվել: Սեպտեմբերի 24-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին՝ ուղղելով հետեւյալ հարցերը. «Աղստեւի մաս հանդիսացող ջրային հողն առանց ՀՀ ջրային կոմիտեի եզրակացության վարձակալությամբ Իջեւանի գինու, կոնյակի գործարանին հանձնելու եւ գետի հունում ապօրինի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է նախաձեռնվել: Անցել է գրեթե 3 տարի, որեւէ մեկին մեղադրանք առաջադրվե՞լ է, ըստ փորձաքննության որքա՞ն է կազմում Աղստեւին, Իջեւանի «Եենդրոպարկին» պատճառված վնասը»: Սեպտեմբերի 26-ին ստացել ենք ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Կ. Շառոյանի ստորագրությամբ պատասխան, որտեղ նշված է. «Ի պատասխան սույն թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ քննչական կոմիտեի նախագահին ուղղված հարցման, հայտնում եմ, որ Ձեր կողմից նշված քրեական վարույթը ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունից ուղարկվել է Տավուշի մարզի դատախազություն՝ նախաքննության հետագա կատարումն ըստ քննչական ենթակայության փոխանցելու հարցը քննարկելու նպատակով»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲԵՔԴՈՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ԳՐՈՀՆԵՐԸ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՈՒԺԳՆԱՑԵԼ ԵՆ

«Կասպերսկի» ընկերության լուծումները 2024-ի առաջին 8 ամիսներին հեռ են մղել Հայաստանում գտնվող կորպորատիվ օգտատերերի համակարգիչների վրա բեֆդորների օգտագործմամբ 10 180 գրոհ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հեռ է մղվել 7 089 գրոհ: Այդ գրոհների քանակն աճել է 44%-ով: Բեֆդորը ծրագիր է, որը չարագործները տեղադրում են կոտրանքի ենթարկված համակարգչում, որպեսզի կրկին հասանելիություն ստանան այդ համակարգչին:

Ընկերության տվյալներով՝ Հայաստանում 2024-ի հունվար-օգոստոսին 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կազմակերպությունները 38%-ով ավելի շատ են ենթարկվել էքսպլոյտների կիրառմամբ գրոհների՝ 23 469 գրոհ 17 035-ի դիմաց: Էքսպլոյտը նկարագրում է հավելվածում կամ գործառնական համակարգում սխալը կամ խոցելիությունն օգտագործելու համար նախատեսված ծրագիրը, կոդի կամ տվյալների մի հատվածը: Էքսպլոյտն օգտագործելով՝ չարագործն ստանում է հավելվածին կամ գործառնական համակարգին չարտոնված հասանելիություն եւ դրանց շահագործման հնարավորություն: Էքսպլոյտները հաճախ կոչվում են այն խոցելիության անվանմամբ, որը դրանք օգտագործում են համակարգ ներթափանցելու համար:

Երկրում կորպորատիվ օգտատերերի համակարգիչների վրա ստիլերների գրոհների քանակը նույնպես մնում է բարձր մակարդակի վրա: 2024-ի առաջին 8 ամիսներին դրանք եղել են 8 720-ը, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի (6 194) համեմատ կազմել է 40%: Ստիլերները գողանում են համակարգչի տվյալները, ներառյալ՝ գաղտնաբառերը:

«Կասպերսկի» ընկերության մասին

«Կասպերսկի»-ն միջազգային ընկերություն է, որը 1997-ից աշխատում է տեղեկատվական անվտանգության եւ թվային գաղտնիության ոլորտում: Այսօրվա դրությամբ ընկերությունը պաշտպանել է ավելի քան 1 միլիարդ սարք զանգվածային կիբեռսպառնալիքներից եւ թիրախային գրոհներից, եւ նրա կուտակած գիտելիքներն ու փորձը հետեւողականորեն փոխակերպվում են նորարարական լուծումների եւ ծառայությունների՝ ամբողջ աշխարհում բիզնեսի, կրիտիկական կարեւոր ենթակառուցվածքների, պետական մարմինների եւ շարքային օգտատերերի պաշտպանության համար: «Կասպերսկի» ընկերության ընդարձակ պորտֆոլիոն ներառում է վերջնական սարքերի պաշտպանության առաջադեմ տեխնոլոգիաներ, մի շարք մասնագիտացված պրոդուկտներ եւ ծառայություններ, ինչպես նաեւ կիբեռիմունային լուծումներ՝ բարդ եւ անընդհատ զարգացող կիբեռսպառնալիքների դեմ պայքարելու համար:

Մենք օգնում ենք ամբողջ աշխարհում 200 հազար կորպորատիվ հաճախորդների պաշտպանել իրենց համար ամենաարժեքավորը:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐՄՐՈՒԿՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ 553 ԴԵՊՔ

ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը ներկայացրել է կարմրուկով վարակվածության իրավիճակը Հայաստանում:

Ըստ այդմ՝ 2024-ին հաստատվել է կարմրուկով վարակման 553 դեպք: Սեպտեմբերի 24-30-ն ընկած ժամանակահատվածում գրանցվել է կարմրուկով վարակման 1 դեպք:

2023 Թ. ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ Է ԵՂԵԼ 47 ԵՐԵԽԱ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեի կողմից սեպտեմբերի 27-ին հրապարակված ՀՀ սոցիալական վիճակագրությունից տեղեկանում է, որ 2023 թվականին ծնողների՝երեխայից հրաժարվելու մասին գրավոր 13 համաձայնություն է հաստատվել:

Որդեգրման երեխաների թիվը 2023 թվականին կազմել է 47 երեխա:

Որդեգրման ենթակա երեխաներից 18-ը երկու ծնող ունեցող երեխաներ են:

17 երեխա մնացել է առանց ծնողական խնամքի:

1 երեխա միայնակ մոր երեխա է, 4-ը՝միակողմանի ծնողազուրկ, 4-ը՝երկկողմանի ծնողազուրկ, 1-ի ծնողներն անհայտ են, 2 երեխաների ծնողները զրկված են ծնողական իրավունքից:

47 երեխայից 26-ը աղջիկներ են, 21-ը՝ տղաներ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ Ն. ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը այցելել է Նիկոլ Աղբալյանի անվան համար 19 հիմնական դպրոց եւ նկատել, որ դասապրոցեսը շարունակվում է բնականոն հունով: Դպրոցի բակում տարհանված աշակերտներ տվյալ պահին չեն եղել:

Նշենք, որ Shamshyan.com-ը գրել էր, որ երեկ՝ հոկտեմբերի 1-ին, արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտը դասասենյակներից մեկում հազ առաջացնող հատուկ նյութ է բաց թողել «բալոնչիկից» :

Երեխաներին տարհանել են՝ասելով, որ գազի պայթյունի վտանգ կա:

Ահազանգով դպրոց են ժամանել նաեւ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Երեւանի հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Մեր տեղեկություններով, բարեբախտաբար, երեխաների առողջությանը վտանգ չի սպառնում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՄԻՍ

Քաղցկեղը դատավճիռ չէ, պարզապես պետք է հետազոտվել եւ հնարավորինս վաղ հայտնաբերել խնդիրը: Այս մասին հայտնում է ՀՀ առողջապահության նախարարությունը: Ամբողջ աշխարհում հոկտեմբերը նշվում է որպես կրծքագեղձի քաղցկեղի իրազեկման ամիս: Նպատակն է բարձրացնել հանրության տեղեկացվածությունը կրծքագեղձի քաղցկեղի, դրա կանխարգելման եւ վաղ ախտորոշման հնարավորությունների վերաբերյալ:

Նախաքաղցկեղային փուլում հիվանդությունը հայտնաբերելու դեպքում՝ մեծանում է քաղցկեղը լիարժեք բուժելու հավանականությունը, նվազում է մահացությունը շուրջ 30%-ով:

Հայաստանում 14 հազար 632 բուժառու պայքարում է կրծքագեղձի քաղցկեղի դեմ, նրանցից 14.336-ը կանայք են:

Ըստ տարիքային խմբերի եւ սեռի՝կյանքում առաջին անգամ հաստատված ախտորոշումով հաճախակի հանդիպող չարորակ նորագոյացությունների թվաքանակով կրծքագեղձի քաղցկեղը Հայաստանում առաջին տեղում է՝ 1511 դեպք (2023թ. տվյալներով): Հիվանդության կանխարգելման փուլերն են՝ առաջնային կանխարգելման մաս է առողջ ապրելակերպը, երկրորդային կանխարգելումը հետազոտությամբ նախակլինիկական փուլում հիվանդության հայտնաբերումն է:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 27 պատահար. 57 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԸՆԹԱՑԻԿ

ՆՈՐ Toyota Land Cruiser LC 250 ՄԵՔԵՆԱՆ

«Տոյոտան» հայ ավտոսիրողներին ներկայացնում է այս բրենդի՝ աշխարհահռչակ Land Cruiser շարքի նոր՝ LC 250 մոդելը, որը ստեղծված է վերադարձ արմատներին հայեցակարգով:

Սրահում ցուցադրված են 2 սեւ եւ 1 սպիտակ «Տոյոտա Լենդ Քրուիզեր 250» մակնիշի ավտոմեքենաներ: Երեք շքեղ ավտոմեքենաները, որոնք սպասում են իրենց երջանիկ տերերին, ի թիվս այլ որակյալ հատկությունների եւ առավելությունների՝ ունեն 279 ձիաուժ, 8 անվտանգության բարձիկ, լույսի սենսոր, 360 աստիճան պտտվող տեսախցիկ եւ թողարկվել են 2024 թվականին:

Մոտ 80 տարիների ընթացքում այս բրենդը ստեղծել է հզորության, հուսալիության եւ ամենադժվար պայմաններին դիմակայելու համբավ եւ, պատահական չէ, որ նոր «Լենդ Քրուիզերի» պարագայում համադրվել են նախորդ սերնդի մեքենաների լավագույն հատկանիշներն ու ժամանակակից տեխնոլոգիաները:

«Տոյոտա» ավտոսրահի վաճառքի ղեկավար Գարի Հարությունյանն ArmLur.am-ի հետ զրույցում վստահեցրեց, որ ցուցադրված ավտոմեքենաները հարմար են մեր երկրում վարելու համար: Այսինքն՝ հայկական բարձրավանդակի սարերն ու ձորերը, նաեւ թեք ու անհարթ ավտոճանապարհները խոչընդոտ չեն այս ավտոմեքենայի համար:

Նկատենք՝ նոր ավտոմեքենայի անվտանգային համակարգն այնպես է կառուցված, որ անվտանգությունն ուղեւորների ու վարորդի համար լավագույնս ապահովված է նաեւ սար ու ձորերով երթեւեկելիս: Իսկ նոր ամենագնացի առանձնահատկություններից է 2.4 լիտր ծավալով տուրբո շարժիչը, որն էականորեն նվազեցնում է վառելիքի ծախսը՝ միեւնույն ժամանակ ապահովելով մեծ հզորություն:

Այս մոդելի մեքենաներն ունեն կաշվե սրահ, ինչը առավել հարմարավետ է դարձնում վարելու ընթացքը, իսկ առջեւի նստատեղերը ունեն «Տոյոտայի» ավանդական տաքացման եւ հովացման հնարավորությունը:

«Տոյոտա» ավտոսրահի տնօրեն Արամայիս Մայրապետյանն իր հերթին նշեց, որ մեքենաները կարող են հիմա էլ գնել, եւ հավելեց, որ այս մոդելով հետաքրքրվածները, մինչեւ գնելը, կարող են «թեստ դրայվ» պատվիրել:

Այսպիսով՝ ավտոմեքենայի որակի հոմանիշ համավող «Տոյոտան» հերթական անգամ իր բարձունքում է՝ պահպանելով բրենդին համապատասխան հուսալիությունը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 05.10.2015 թվականին «Դավս» ՍՊԸ-ին տրամադրված ՏԾ N 05316 լիցենզիայի բոլոր ներդիրները կորել են: Խնդրում ենք ճանաչել անվավեր:

«ԴԱՎՍ» ՍՊԸ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» Գ

DigiTech-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ Է ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊՐՈԴՈՒԿՏՈՎ

«Կոնվերս» բանկը DigiTech-ին մասնակցելու է իր ներդրումային գործիքակազմով, այդ թվում՝ տեխնոլոգիական այս միջոցառմանը ներկայացվելու են բանկի թվային լուծումները, ինչպես նաեւ Հայաստանում նմանը չունեցող ապրանքներ ու առաջարկներ:

««Կոնվերս» բանկն այսօր շուկային է ներկայանում ներդրումային, խնայողությունների կառավարման տարբեր պրոդուկտներով եւ առաջարկներով, այդ թվում՝ թվային հարթակներում: Բանկի թվային գործիքակազմը հետզհետե ընդլայնվում է, ներդրվում են տարբեր սեգմենտների համար նախատեսված պրոդուկտներ ու ծառայություններ: Դրանցից մի քանիսը կներկայացնենք DigiTech-ի ընթացքում: Վստահ ենք, որ մեր առաջարկները կհետաքրքրեն ինչպես ներդրողներին կամ խնայողությունների դիվերսիֆիկացմամբ հետաքրքրված անձանց, այնպես էլ բիզնես գործունեության ընթացքում արտասահմանյան կազմակերպությունների հետ սերտորեն փոխգործակցող ընկերություններին», - ասել են «Կոնվերս» բանկում:

Մասնավորապես, DigiTech-ի ընթացքում ներկայացվելու են «Կոնվերս» բանկի.

● Converse Markets թվային հարթակը. այն նախատեսված է տնտեսվարողների համար, ովքեր իրենց գործունեության ընթացքում հաճախակի են օգտվում արտարժույթի փոխանակման բանկային ծառայությունից:

Բաժանորդագրվելով Converse Markets արտարժույթի փոխարկման առցանց հարթակին՝ առանց լրացուցիչ ծախսերի, հաճախորդները ստանում են արտարժույթի փոխարկման հարմարավետ, անվտանգ, պարզ ու շահավետ միջավայր, որտեղ ընդամենը մի քանի հպումով, հաշված վայրկյանների ընթացքում ձեռք են բերում անհրաժեշտ արժույթն արտոնյալ փոխարժեքով:

● Կորպորատիվ պարտատոմսերի թողարկում եւ տեղաբաշխման առաջարկ. «Կոնվերս« բանկն այս ոլորտում հարուստ փորձառություն ունի: Նախորդ տարվանից բանկը սկսել է թողարկել եւ տեղաբաշխել նաեւ գործընկեր ընկերությունների կորպորատիվ պարտատոմսեր՝ դրանով իսկ իր ներդրումն ունենալով տնտեսության եւ արժեթղթերի շուկայի զարգացման հարցում:

Ըստ որում, դեպոզիտար հաշիվ բացել եւ բանկի թողարկած պարտատոմսեր ձեռք բերել հնարավոր է նաեւ Converse Mobile հավելվածում:

● Բրոքերային ծառայություններ

● Արժեթղթերի գնում եւ վաճառք. բանկն առաջարկում է պետական եւ կորպորատիվ պարտատոմսեր, ընկերությունների բաժնետոմսեր եւ ֆոնդեր փայեր՝ հաճախորդներին մատչելի դարձնելով ինչպես հայկական, այնպես էլ միջազգային շուկաները:

● Ներդրումային խորհրդատվություն. բանկի փորձառու մասնագետները կօգնեն մշակել ներդրումային ռազմավարություն՝ հարմարեցված հաճախորդի նպատակներին ու ռիսկերի նկատմամբ համբերատարությանը:

● Հաշիվների բացում եւ կառավարում. բանկն առաջարկում է բրոքերային հաշիվների բացում եւ կառավարում՝ ապահովելով հուսալիություն եւ արագություն:

Եվ այսպես, հանդիպում ենք հոկտեմբերի 4-6-ը «Մերիդիան էքսպո կենտրոնում»՝ «Կոնվերս» բանկի տաղավարում: Մեր մասնագետները պատրաստակամ են պատասխանել Ձեր հարցերին, տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն եւ առաջարկել լուծում յուրաքանչյուրի համար:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ». ԱՎԵԼԻ ՀԱՐՄԱՐԱՎԵՏ Գ

2024 թվականի հոկտեմբերի 1-ից «Հայէկոնոմբանկի» Visa պրեմիում քարտապանները հնարավորություն կունենան վայելելու իրենց ազատ ժամանակը օդանավակայանների բիզնես սրահներում այժմ արդեն LoungeKey հավելվածի փոխարեն Visa Airport Companion հավելվածի միջոցով:

Օդանավակայանների բիզնես սրահների մուտքի համար քարտապանը պետք է ներբեռնի Visa Airport Companion հավելվածը AppStore/Play Market հարթակներից կամ ստանա բաժանորդագրման QR-ը Visa Concierge չատ-բոտի միջոցով:

Վերջինիս միջոցով հնարավոր կլինի մուտք գործել DragonPass-ի աշխարհի ավելի քան 1200 բիզնես սրահներ, դիտել բիզնես սրահների հասանելի մուտքերի քանակը եւ օգտագործված մուտքերի պատմությունը: Հարկ է նշել, որ սույն թվականի հոկտեմբերի 1-ից բիզնես սրահ մուտք գործելու համար նախատեսված նախկին QR-ները կհամարվեն անվավեր, ինչպես նաեւ հնարավոր չի լինի մուտք գործել բիզնես սրահներ՝ ցուցադրելով պրեմիում քարտը: «Հայէկոնոմբանկի» պրեմիում քարտապանները հնարավորություն ունեն ոչ միայն օգտվելու օդանավակայանների բիզնես սրահներ անվճար մուտք գործելու հնարավորությունից, այլ նաեւ մի շարք այլ արտոնություններից՝ Fast Track, Concierge ծառայություն, անվճար ինտերնետ ռոումինգ, ճամփորդական ապահովագրություն, ուղեբեռի անվճար փաթեթավորում եւ բազում այլ ճամփորդական առավելություններ: Այս ամենը կդարձնի յուրաքանչյուր ճանապարհորդություն առավել հարմարավետ՝ ապահովելով լավագույն ծառայությունները եւ ճամփորդական արտոնությունները:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է Սաթենիկ Գալստյանի՝ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Պտղնի գյուղի վարչական տարածքում ձկնաբուծական նպատակով Հրազդան գետից 101.5 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 7-ին՝

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԽՈՒՐՅԱՆ ՇՈՒՐՋՊԱՐ»-Ը՝ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Հոկտեմբերի 13-ին Մարմաշեն վանական համալիրի տարածքում տեղի կունենա «Ախուրյան շուրջպար» մեծամասշտաբ տոնակատարությունը: Այս մասին հայտնում են Շիրակի մարզպետի աշխատակազմից:



Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանը մարզպետի տեղակալ Աննա Մարտիկյանի, աշխատակազմի պատասխանատուների հետ նախօրեին հյուրընկալել է Ախուրյան համայնքի ղեկավար Ջավեն Մանուկյանին եւ Հայաստանի ազգային պարարվեստի միության անդամ, պարուսույց, «Մարինա» պարային համույթի գեղարվեստական ղեկավար Լիպարիտ Մարկոսյանին:

Հանդիպման ժամանակ քննարկվել են «Ախուրյան շուրջպար» տոնակատարության կազմակերպչական աշխատանքներին առնչվող հարցեր:

Շիրակի մարզպետը կարեւորել է այդօրինակ միջոցառման անցկացման գաղափարը՝ նշելով, որ մեծամասշտաբ միջոցառումը կվկայի միասնականության, համախմբվածության ու հայրենասիրության մասին՝ համայնքում ավանդական պար ունենալը համարելով կարեւոր իրադարձություն:

Մուշեղ Մուրադյանը հավաստել է, որ մարզպետի աշխատակազմը կանի հնարավորը լիազորությունների շրջանակում միջոցառումը պատշաճ կազմակերպելու եւ անցկացնելու նպատակով՝ առանձնահատուկ կարեւորելով բոլոր ծառայությունների համագործակցված աշխատանքը դեպքերից ու խնդիրներից զերծ մնալու համար:

Ջավեն Մանուկյանը նշել է, որ «Ախուրյան շուրջպար» տոնակատարությունը համայնքի համար տարվա ամենամեծ միջոցառումն է լինելու, եւ իրենք եւս ամեն ինչ անում են միջոցառումը բարձր որակով իրականացնելու համար:

Լիպարիտ Մարկոսյանը տեղեկացրել է, որ նախաձեռնող խումբը արդեն շրջել է Ախուրյան համայնքի բնակավայրերում եւ 700-ից ավելի ախուրյանցիների անվճար ուսուցանել են պարը:

«Ախուրյան շուրջպար» տոնակատարությունը տեղի կունենա հոկտեմբերի 13-ին՝ ժամը 13:00-ին, Մարմաշեն վանական համալիրի տարածքում:

Շուրջպարին միանալու է 12 տարեկանից բարձր շուրջ երկու հազար մասնակից՝ պարելով նոր մշակված «Ախուրյան» ավանդական պարը:

Պար ունենալու մտահղացումը Ախուրյանի բնակիչ Մելիք Խաչատրյանինն է եղել, ով գաղափարն իրականացնելու համար դիմել է Լիպարիտ Մարկոսյանին, վերջինս էլ նախաձեռնել է պարի բեմադրության բոլոր հարցերը:

Պարը վերամշակել է Հայաստանի ազգային պարարվեստի միության նախագահ, «Բերդ» պարային անսամբլի գեղարվեստական ղեկավար Կարեն Գեւորգյանը:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Yerevanilla.am ՖԻԼՄԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻՆ

Երեւանի մասին պատմող Yerevanilla.am ֆիլմի պրեմիերան տեղի կունենա հոկտեմբերի 4-ին՝ ժամը 19:00-ին «Մոսկվա» կինոթատրոնում: Ֆիլմն արդեն իսկ հայաստանյան կինովարձույթում է:

Երեւանի մասին պատմող կարճամետրաժ խաղարկային ֆիլմերի ալմանախը հինգ ռեժիսորների աշխատանք է: Այն միահյուսում է մայրաքաղաքի խնդիրներն ու կոլորիտը եւ պատմում քաղաքի՝ բնակիչներին ուղղված սիրո մասին:

Նախագիծն իրականացվել է Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ:

«Մեր ժամանակների Երեւանի, երեւանցիների ու մայրաքաղաքի հին ու նոր բնակիչների մասին պատմող ֆիլմաշարը, վստահ եմ, կգրավի կինոսեր հանրության ուշադրությունը՝ ասելիքի թարմությամբ, անսպասելի լուծումներով եւ, իհարկե, կյանքի պարզ ու առօրեական դրվագները երեւանյան ջերմ ու զգացմունքառատ խորապատկերում նրբանկատորեն վերհանելու՝ ֆիլմաշարի հեղինակների, ռեժիսորների, ստեղծագործական ողջ թիմի հաջողված աշխատանքի շնորհիվ»,- ֆիլմի մասին նշել է Երեւանի քաղաքապետի տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը:

Ռեժիսորներ՝ Թամարա Աբաջյան, Գեւորգ Շարամբեյան, Սերժ Գաբյան, Արամ Շահբազյան, Վահան Գրիգորյան: Պրոդյուսեր՝ Էդգար Բաղդասարյան:

Դերերում՝ Նատալյա Եփրիկյան, Արուսիկ Տիգրանյան, Արամ Կարախանյան, Արթուր Մանուկյան, Անդրանիկ Աբրահամյան եւ այլք:

Հավելենք, որ ֆիլմն ունեցել է հատուկ ցուցադրություն՝ «Ոսկե ծիրան» 21-րդ միջազգային երեւանյան կինոփառատոնի շրջանակում:

ՄԱՀԱՑԵԼ Է ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ՎՅԱՉԵՍԼԱՎ ԴՈԲՐԻՆԻՆԸ

2024 թվականի հոկտեմբերի 1-ին հայտնի դարձավ, որ 79 տարեկան հասակում մահացել է երգիչ եւ կոմպոզիտոր Վյաչեսլավ Դոբրինինը:

Վյաչեսլավ Գրիգորեւիչ Դոբրինինը (ծննդյան անունը՝ Վյաչեսլավ Գալուստովիչ Անտոնով) ծնվել է Մոսկվայում: Նրա հայրը զինծառայող Գալուստ Պետրոսյանն էր: Մայրը՝ Աննա Անտոնովան, աշխատում էր որպես բուժքույր:

Դոբրինինը Ռուսաստանի Դաշնության ժողովրդական արտիստ էր (1996 թ.):

Նա պարգեւատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» IV աստիճանի (2006) եւ «Բարեկամության» (2018) շքանշաններով:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԼԵՈ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Հայաստանը «Մանկական Եվրատեսիլ 2024» երգի մրցույթում կներկայացնի Լեո Մկրտչյանը:

Հայաստանի այս տարվա պատվիրակն ընտրվել է Հանրային հեռուստաընկերության նախապես հայտարարած մրցույթի արդյունքում, որին 100-ից ավելի հայտ էր ստացվել: Տեղի եւ միջազգային լավագույն մասնագետներից բաղկացած փորձագիտական խմբի որոշմամբ՝ լավագույնն է ճանաչվել 10-ամյա Լեոն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՎԵԼԱՑՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Իտալական «Նապոլին» մտադիր է ավելացնել Խվիչա Կվարացխելիայի աշխատավարձը:

Լրագրող Ջանլուկա Դի Մարցիոյի կայքը գրում է, որ սեպտեմբերի 30-ին ակումբի ղեկավարները կապվել են վրացի ֆուտբոլիստի գործակալի հետ: Կողմերը պայմանավորվել են առաջիկա շաբաթներին հանդիպել:

«Նապոլին» դեռ այս տարվա հուլիսին առաջարկ է արել 23-ամյա ֆուտբոլիստին: Ակումբը պատրաստ է բարելավել նրա աշխատավարձն ու այն դարձնել 6 միլիոն եվրո: Այդքան է վաստակում նաեւ «Նապոլիի» ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը՝ բելգիացի հարձակվող Ռոմելու Լուկակուն:

Կվարացխելիան նեապոլյան ակումբում հանդես է գալիս 2022 թ. հուլիսից: 96 խաղում նա դարձել է 28 գոլի ու 28 գոլային փոխանցման հեղինակ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԻՍԱՊԱՇՏՊԱՆՆԵՐ

Եվրոպական հայտնի FourFourTwo հրատարակությունը հրապարակել է այս պահին աշխարհի լավագույն կենտրոնական կիսապաշտպանների սեփական վարկանիշը, որը գլխավորում է «Մանչեսթեր Սիթիի» խաղացող Իլկայ Գյունդողանը:

Աշխարհի լավագույն կենտրոնական կիսապաշտպանների տասնյակը՝ ըստ FourFourTwo-ի.

Իլկայ Գյունդողան - «Մանչեսթեր Սիթի»
Ֆեդերիկո Վալվերդե - «Ռեալ Մադրիդ»
Բերնարդու Սիլվա - «Մանչեսթեր Սիթի»
Պեդրի - «Բարսելոնա»
Ալեքսիս Մակ Ալիստեր - «Լիվերպուլ»
Գրանիտ Ջակա - «Բայեր Լեւերկուզեն»
Ուորեն Ջաիր - Էմերի-ՊՍԺ
Գավի - «Բարսելոնա»
Լուկա Մոդրիչ - «Ռեալ Մադրիդ»
Ֆաբիան Ռուիս - ՊՍԺ

ՇԱՆՍԵՐ

Opta վիճակագրական հարթակի սուպերհամակարգիչը գնահատել է Ռուսաստանի Պրեմիեր լիգայի թիմերի շանսերը 10-րդ տուրից հետո:

Ոսկե մեդալներ նվաճելու գլխավոր թեկնածուն գործող չեմպիոն Սանկտ Պետերբուրգի «Զենիթն» է, որի չեմպիոնության հավանականությունը գնահատվում է 45,4 տոկոս: Երկրորդն ընթացիկ առաջնության առաջատար «Կրասնոդարն» է (30,4 տոկոս), իսկ լավագույն եռյակը եզրափակում է Մոսկվայի «Լոկոմոտիվը» (20,8 տոկոս):

Ավելի ցածր են գնահատվում Մոսկվայի «Դինամոյի» (2,1 տոկոս), ԲԿՄԱ-ի (0,8 տոկոս) ու «Սպարտակի» (0,5 տոկոս) հնարավորությունները: Ըստ սուպերհամակարգչի՝ մնացած թիմերը չեմպիոնության շանսեր չունեն:

Հիշեցնենք, որ նախորդ տուրից հետո «Կրասնոդարը» 24 միավորով գլխավորել էր մրցաշարային աղյուսակը: Նույնքան միավոր ունի նաեւ երկրորդ տեղում գտնվող «Լոկոմոտիվը», իսկ «Զենիթը» 23 միավորով երրորդն է:

● Հոկտեմբերի 13-ին՝ ժամը 14:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում կցուցադրվի «Սպիտակաձյունիկը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.000-3.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի՝ դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Անաստաս Միքայելյան (43 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ավտոապահովագրողների բյուրոն ո՞ր դեպքում է հատուցում տուժած անձանց պատճառված վնասները:

Արամ Հարությունյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

Ի վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: Այս դեպքում Բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է միայն տուժած անձանց պատճառված անձնական վնասները:

- Վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:
- Վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ:
- Վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ), եթե նա, օրենքի համաձայն, պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ երաշխավորման ֆոնդը գոյանում է Բյուրոյի անդամների կողմից կատարվող միանվագ, պարբերական եւ լրացուցիչ վճարներից, օրենքով սահմանված այլ ձեւերով ներդրված միջոցներից, ինչպես նաեւ այն ակտիվներից, որոնցում ներդրվել են դրանք, եւ դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտներից: Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար օրենքով սահմանված նպատակներով եւ դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանում Չեխիայի դեսպանության կազմակերպած տոնական միջոցառման շրջանակում երեկ տեղի է ունեցել նաեւ Խանջյան 7 շենքի ճակատին նկարված, չեխ մեծանուն նկարիչ Ալֆոնս Մուխայի գործերից մեկով ներշնչված մուրալի բացումը: Հսկայական որմնանկարի հեղինակը երիտասարդ նկարիչ Ռոբերտ Նիկողոսյանն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +18 + 21
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +22 + 24
Գեղարքունիք	+ 4 + 8 +17 + 20
Լոռի	+ 6 + 10 +18 + 21
Տավուշ	+ 8 + 13 +20 + 24
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +21 + 25

Արարատ	+ 13 + 15 +25 + 27
Արմավիր	+ 12 + 14 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 27
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
ԼՂՀ	+ 8 + 10 +17 + 19
Երեւան	+ 16 + 18 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*